

Կ Ա Ր Ծ Ի Ք

պաշտոնական ընդդիմախոսի՝

Ռոզա Էդիկի Բարսեղյանի

«Ճագարների էյմերիոզի հարուցիչների բազմազանությունը և համաճարակաբանությունը Հայաստանում» Գ.00.08 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայծման ատենախոսության վերաբերյալ

Ճագարաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության համեմատաբար երիտասարդ, սակայն բուռն և դինամիկ զարգացող ոլորտ, որը շատ մեծ հետաքրքրություն է վայելում մեր երկրում, հատկապես վերջին տարիներին: Սակայն ոլորտի զարգացմանը զգալիորեն խոչընդոտում են տարբեր հիվանդությունները, այդ թվում՝ մակաբուծային բնույթի:

Ճագարների մակաբուծները կարևոր տեղ են զբաղեցնում անասնաբուժական ախտաբանությունում: Երկրագնդի առանձին երկրներում և տարածաշրջաններում ճագարների վարակվածությունը մակաբուծներով կարող է հասնել 100%: Մակաբուծներն ազդում են ոչ միայն կենդանիների առողջական վիճակի, այլ նաև դրանց մթերատվության քանակական և որակական ցուցանիշների վրա, ոլորտին հասցնելով լուրջ տնտեսական վնաս: Առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ճագարների էյմերիոզը, որը լայնորեն տարածված է երկրագնդի գրեթե բոլոր երկրներում և պատկանում է ճագարների ամենաճանր ու վտանգավոր հիվանդությունների շարքին: Ճագարների, հատկապես մատղաշի, վարակվածությունը էյմերիաներով հատկապես աճել է վերջին տարիների ընթացքում, ինչը պայմանավորված է կենդանիների պահվածքի, խնամքի և կերակրման պայմանների վատթարացմամբ, ինչպես նաև համակարգված պլանային հակամակաբուծային միջոցառումների բացակայությամբ:

Չնայած խնդրի ակնհայտ արդիականությանը, ճագարների էյմերիոզին վերաբերող գիտական հետազոտությունները Հայաստանում գրեթե չեն իրականացվել:

Վերը նշվածը վկայում է Ռ.Է. Բարսեղյանի ատենախոսության թեմայի արդիականության մասին:

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի պայմաններում ճագարների էյմերիոզի հարուցիչների բազմազանության ուսումնասիրությանը, հիվանդության

համաճարակաբանական որոշ օրինաչափությունների և պաթոգենեզի առանձին կողմերի բացահայտմանը, ինչպես նաև էյմերիոզի դեմ էկոլոգիապես անվտանգ բուժականխարգելիչ միջոցառումների մշակմանը:

Աշխատանքը շարադրված է 115 էջի վրա, կազմված է ներածությունից, գրական ակնարկից, սեփական հետազոտություններից, որոնք ներառում են հետազոտության նյութը և մեթոդները ու 2 գլուխ սեփական հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև եզրակացություններից և գրականության ցանկից, որը բաղկացած է 221 անվանումից: Այն ներառում է 12 հայրենական, 207 արտասահանյան գիտական գրական աղբյուր և 2 համացանցային ռեսուրսի հղում:

Ատենախոսությունը պարունակում է 23, աղյուսակ և 32 նկար: Հավելվածներում տեղադրված է 2 աղյուսակ և 10 լուսանկար:

Ներածությունում ատենախոսը հիմնավորում է Հայաստանում ճագարների էյմերիոզի հետազոտության անհրաժեշտությունը, արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, աշխատանքի փորձահավաստիությունը և գիտական հրապարակումները:

Հետազոտական աշխատանքների արդյունքները կարող են հաջողությամբ կիրառվել գործնական ճագարաբույսությունում, գյուղատնտեսության, անասնաբուժության և սննդամթերքի ոլորտների կառավարման կազմակերպություններում և հիմնարքներում, ինչպես նաև ներառվել «Մակարածաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ», «Ընդհանուր անասնաբուժություն», «Ճագարաբուժություն» և «Գյուղատնտեսական կենդանիների հիգիենա» առարկաների բուհական և հետբուհական ուսումնական ծրագրերում:

Գրական ակնարկում (գլուխ 1) հեղինակը բավականաչափ մանրամասն նկարագրում է Հայաստանի Հանրապետության, հատկապես հետազոտվող տարածքների՝ Գեղարքունիքի և Լոռու մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի, ֆիզիկաաշխարհագրական տվյալները, ներկայացնում է Հայաստանում ճագարաբուժության պատմական ակնարկը և ոլորտի արդի վիճակը, շարադրում է ճագարների հիմնական մակարոնային հիվանդությունների վերաբերյալ գրական տվյալները, շեշտելով ճագարների էյմերիոզի ախտածնությունը և

տարածվածությունը: Ընդհանուր առմամբ հեղինակի կողմից վերլուծվել է 221 գրական աղբյուր:

Գլուխ 2-ում ատենախոսը նկարագրում է հետազոտության նյութը և մեթոդները, ներկայացնում է նմուշառման կարգը, հետազոտությունների ծավալը, ճագարների կղանքի հետազոտության որակական և քանակական մակաբուծաբանական մեթոդները, ճագարների էյմերիաների տեսակների որոշման մեթոդաբանական մոտեցումները, նկարագրում է փորձարարական նպատակով էյմերիաների օոցիստներով ճագարներին արհեստական վարակման մեթոդիկան, ճագարների արյունաբանական հետազոտությունների մեթոդաբանական մոտեցումները և առանձին արյունաբանական ցուցանիշների որոշման նշանակությունը: Նկարագրված է նաև ստացված փորձարարական արդյունքների վիճակագրական վերլուծության մեթոդները և ցուցանիշները:

Ատենախոսության 3-րդ գլուխը, որը կազմված է 3 ենթագլուխներից, նվիրված է Հայաստանի Հանրապետության տարբեր բնակլիմայական գոտիներում ճագարների էյմերիոզի հարուցիչների տեսակային կազմի և համաճարակաբանության ուսումնասիրության արդյունքների շարադրմանը: Այս տեսակետից ատենախոսի կողմից կատարվել է բավականին ծավալուն և բազմակողմանի աշխատանք, ընդ որում, նշված հետազոտությունների մեծ մասը Հայաստանում իրականացված է առաջին անգամ հենց ատենախոսի կողմից:

Ենթագլուխ 3.1-ը նվիրված է Հայաստանի տարբեր բնակլիմայական գոտիներում ճագարների մոտ մակաբուծող էյմերիաների տեսակային կազմի ուսումնասիրությանը: Հեղինակը պարզել է, որ Հայաստանի պայմաններում ճագարների մոտ մակաբուծում է էյմերիաների 7 տեսակ: Ամենահաճախ հանդիպող տեսակը *Eimeria irresidua*-ն է: *Eimeria exigua* և *E. coecicola* տեսակները Հայաստանում արձանագրվել են առաջին անգամ:

Ենթագլուխ 3.2-ում հեղինակը ներկայացնում է էյմերիաներով ճագարների վարակվածության էքստենսիվության և ինտենսիվության ցուցանիշների կախվածությունը կենդանիների տարիքից և տարվա եղանակից: Հետազոտությունների արդյունքում հեղինակը պարզեց, որ մատղաշ ճագարների վարակվածության ցուցանիշները կախված չեն տարվա եղանակից՝ սեզոնից, մինչդեռ սեռահասուն ճագարների վարակվածության էքստենսիվության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է աշնանը, իսկ ամենացածրը՝ ձմռանը: Վարակվածության ինտենսիվության ցուցանիշի կախվածությունը տարվա եղանակից նախալեռնային և լեռնային գոտիներում չի գրանցվել, մինչդեռ

հարթավայրային գոտում այդ ցուցանիշը աճում է գարուն-ամառ սեզոնին: Ատենախոսի տվյալներով, էյմերիաներով վարակվածության ինտենսիվության ցուցանիշը մատղաշ ճագարների մոտ ավելի բարձր է, քան հասուն ճագարների մոտ:

Ենթագլուխ 3.3-ում ներկայացված են Հայաստանի պայմաններում ճագարների տարբեր ցեղերի մոտ մակաբուծող էյմերիաների տեսակները, ինչպես նաև էյմերիաներով ճագարների վարակվածության ցուցանիշների կախվածությունը ցեղից: Հեղիանկի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ էյմերիաների տեսակային կազմը, հիմնականում, կախված չէ ճագարների ցեղից: Կալիֆորնիական և հսկա ցեղերի խառնուրդների մոտ արձանագրվել է *Eimeria stiedae* (*E. stiedai*) տեսակը, որը բացակայում էր մյուս ցեղերի ճագարների մոտ:

Ատենախոսության 4-րդ գլուխը նվիրված է ճագարների կլինիկաարյունաբանական հետազոտություններին: Պետք է նշել, որ էյմերիաներով վարակված ճագարների արյունաբանական ցուցանիշների փոփոխությունները Հայաստանի պայմաններում առաջին անգամ ուսումնասիրվել են հենց ատենախոսի կողմից: Ըստ հեղինակի տվյալների, էյմերիաներով ինտենսիվ վարակված ճագարների մոտ հավաստի փոփոխվում են արյան գրեթե բոլոր ձևաբանական ցուցանիշները:

Համաձայն ատենախոսի, էյմերիաներով ճագարների վարակվածության ինտենսիվության վրա հիմնական ազդեցություն են թողնում կերակրման ու պահվածքի պայմանները: Որպես ճագարների էյմերիոզի կանխարգելման և վերահսկման հիմնական, էկոլոգիական անվտանգ միջոց հեղինակն առաջարկում է ճագարներին կերակրել հատուկ համակցված կերով և ճիշտ կազմակերպել կենդանիների խնամքը:

Ատենախոսության շարադրանքն ավարտվում է եզրակացություններով: Վերջինները բխում են ատենախոսի սեփական հետազոտությունների արդյունքներից, ձևակերպված են հստակ և հակիրճ:

Աշխատանքից երևում է հետազոտությունների արդյունքներն ինքնուրույն վերլուծելու և գնահատելու հեղինակի ունակությունը, ինչն, անշուշտ, դրական է բնորոշում ատենախոսին որպես կայացած գիտնական:

Ատենախոսության նյութը լիովին արտացոլված է հրապարակված աշխատություններում (11 տպագրված աշխատանք), ինչպես նաև ներկայացված է տարածաշրջանային և միջազգային գիտական կոնֆերանսներին:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնադրույթները:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, անհրաժեշտ եմ համարում ուշադրություն դարձնել ատենախոսության ձևակերպման ընթացքում տեղ գտած որոշ անճշտությունների վրա՝

1. Ավելի ճիշտ կլիներ ճագարների փորձարարական վարակումն իրականացնել ոչ թե կենսադանիների կղանքով, այլ կոնկրետ մեկ կամ մի քանի տեսակի էյմերիանների օնցիստների մաքուր կուլտուրայով:
2. Կարծում եմ, ֆասցիոլոզի, պասալուրոզի և սարկոպտոզի վերաբերյալ տվյալները չեն բխում աշխատանքի նպատակից և խնդիրներից, ուստի դրանց կարելի էր ուղղակի չընդգրկել աշխատանքում:
3. 3-րդ գլխի էջ 74-ում հեղինակը նկարագրում է լյարդի մակրոսկոպիկ փոփոխությունները և ախտորոշում է հեպատիտ, մինչդեռ հեպատիտը, ինչպես և ցանկացած այլ օրգանի բորբոքումը, կարելի է ստույգ ախտորոշել միայն մանրադիտակային, հյուսվածաբանական եղանակով: Մակրոսկոպիկ փոփոխությունները հեպատիտի ախտորոշման հիմք չեն կարող հանդիսանալ:
4. Արյունաբանական ցուցանիշների լատիներեն հապավումների կրկնությունը յուրաքանչյուր աղյուսակում համարում եմ ավելորդ ու անիմաստ: Կարելի էր սահմանափակվել նրանց նկրագրությամբ միայն «Հետազոտության նյութը և մեթոդները» բաժնում:
5. Ենթագլուխ 4.2-ում հեղինակը ներկայացնում է էյմերիոզով հիվանդ ճագարների արյան ձևաբանական ցուցանիշների փոփոխությունները, սակայն չի բացատրում առանձին ցուցանիշների փոփոխության հնարավոր պատճառները:
6. Ցանկալի կլիներ ենթագլուխ 4.3-ի սկզբնամասը տեղափոխել «Գրական ակնարկ» գլուխ, քանի որ այնտեղ նկարագրված է կոկցիդիոստատիկների և այլ հակաէյմերիոզային դեղանյութերի արդյունավետության ուսումնասիրության գրական տվյալները:
7. Հավելվածի 2-րդ և 3-րդ լուսանկարների վերնագիրը «Նմուշառում...», ինչպես նաև 9-րդ և 10-րդ լուսանկարները վերնագիրը «Լաբորատոր փորձարարական աշխատանքները...» չեն համապատասխանում նկարներում պատկերված ճագարներին և վադնակներին, առանց որևէ նմուշառման կամ այլ փորձարարական բնույթի գործողության պատկերելուն:

8. Ատենախոսության տեքստում տեղ են գտել առանձին տպագրական և ուղղագրական սխալներ: Օրինակ՝

- էջ 3-ի 3-րդ պարբերության սկզբում տեղ է գտել տպագրական վրիպում՝ նախադասության սկիզբը բաց է թողնված:
- Գրական ակնարկի էջ 19-ում՝ «Ը» տառով ոչ հայկական ոչ մի անձնանուն չի սկսվում:

Վերը թվարկած դիտողությունները հիմնականում վերաբերում են աշխատանքի ձևակերպմանը և բնավ չեն նսեմացնում ատենախոսության գիտական և գործնական արժեքը:

Եզրակացություն՝ Ռ.Է. Բարսեղյանի ատենախոսությունն իր արդիականությամբ, կատարված հետազոտությունների ծավալով, տեսական և գործնական նշանակությամբ, ինչպես նաև ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Կենսաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի
գիտական կենտրոնի գիտաշխատող

Օ.Վ.Շչերբակով

Գիտական կենտրոնի գիտաշխատող Օ.Վ. Շչերբակովի ստորագրությունը
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի
գիտական կենտրոնի գիտական քարտուղար
Կենսաբանական գիտությունների թեկնածու



Հ.Գ.Խաչատրյան

12.01.2024թ.